**Լրացուցիչ տեղեկություններ ոտնձգության, բուլինգի և խմբային ահաբեկման մասին**

**ՀԱՀ-ը ցուցաբերում է զրոյական հանդուրժողականություն ոտնձության, բուլինգի և խմբային ահաբեկման նկատմամբ**

### Ոտնձգություն

Ոտնձգությունը սովորաբար սահմանվում է որպես վարքագիծ, որը ստորացնում, նվաստացնում, կամ ամոթալի դրության մեջ է դնում անձին կամ մարդկանց: Այդ վարքագիծը կարող է դիտվել որպես անհանգստացնող, վշտացնող կամ սպառնալիք պարունակող: Երբ նման վարքագիծը պարբերաբար կրկնվում է, այն սահմանվում է որպես բուլինգ:

ՀԱՀ համայնքի անդամներին արգելվում է ներգրավվել ոտնձգության, ահաբեկման կամ բուլինգի որևէ դրսևորման մեջ: Ուսանողը, աշխատակիցը կամ դասախոսը պատասխանատվություն կկրեն ոտնձգության, ահաբեկման կամ բուլինգի դրսևորումներում ներգրավված լինելու համար, եթե նրանք ցուցաբերեն վարքագիծ, ներառյալ, բայց առանց սահմանափակման, որևէ ժեստ, գրավոր, բանավոր կամ ֆիզիկական գործողություն կամ էլեկտրոնային հաղորդակցություն (այդ թվում՝ էլեկտրոնային նամակներ, տեքստային հաղորդագրություններ, ինչպես նաև կայքերում կամ սոցիալական ցանցերում առցանց հրապարակումներ), լինի դա մեկ միջադեպ, թե միջադեպերի շարք, որն այնքան լուրջ կամ տարածված և/կամ օբյեկտիվորեն վիրավորական է, որ էապես խաթարում է Համալսարանի բնականոն գործունեությունը կամ խոչընդոտում է համալսարանական համայնքի որևէ անդամի իրավունքների իրացմանը:

### Բուլինգ

Բուլինգը ֆիզիկական կամ հոգեբանական շարունակական բռնություն է, որը կատարվում է անհատի կամ խմբի կողմից այն անձի նկատմամբ, որը տվյալ իրավիճակում անկարող է ինքնապաշտպանվել: Բուլինգը սովորաբար կրում է կանխամտածված բնույթ և նպատակ ունի վիրավորելու, սպառնալու, վախեցնելու կամ սթրեսի ենթարկելու տվյալ անձին:

Աշխատավայրում բուլինգը բաժանվում է հետևյալ կատեգորիաների.

- Մասնագիտական կարգավիճակի նկատմամբ սպառնալիքներ, օրինակ՝ մասնագիտական հեղինակության հրապարակային արժեզրկում, ջանքերի անբավարար լինելու մասին մեղադրանքներ և արժեզրկող մեկնաբանություններ,
- Սոցիալական կարգավիճակի նկատմամբ սպառնալիքներ, օրինակ՝ ծաղր և պիտակավորում,
- Մեկուսացում, օրինակ՝ տեղեկատվության դիտավորյալ չտրամադրում և մասնագիտական աճի հնարավորությունների սահմանափակում, ինչպիսիք են վերապատրաստման սեմինարներին մասնակցելը, դասընթացներին հաճախելը և վերջնաժամկետների մասին տեղյակ լինելը,
- Դեստաբիլիզացիա, օրինակ՝ անիմաստ առաջադրանքների հանձնարարում, կատարած աշխատանքի արժանի գնահատականի բացակայություն, ղեկավար պաշտոններից հեռացում:

### Խմբային ահաբեկում/մոբինգ

Խմբային ահաբեկումը բուլինգի մի տեսակ է, որի դեպքում հավաքական խմբի անդամները միավորվում են՝ թիրախային անձին նսեմացնելու նպատակով՝ սպառնալիքի, անհիմն մեղադրանքների, նվաստացման և ընդհանուր ոտնձգության միջոցով:

Համալսարանն ունի հետևյալ պարտականությունները.

- Ապահովել անվտանգ աշխատանքային և ուսումնական միջավայր, ներառյալ բուլինգից զերծ միջավայրը,
- Անհրաժեշտության դեպքում իրականացնել հետաքննություն և համապատասխան լուծումներ կիրառել բուլինգի բոլոր դեպքերի համար,
- Համոզվել, որ ուսանողները, աշխատակազմը և դասախոսները ծանոթ են ոտնձգության և բուլինգի սահմանումներին և ներդնել մեխանիզմներ՝ դրանց կանխարգելման/վերահսկման համար:

ՀԱՅ համայնքի անդամներն ունեն հետևյալ պարտականությունները.

- Հարգել համալսարանական համայնքի մյուս անդամների իրավունքներն ու բարեկեցությունը,
- Աջակցել այլոց՝ աշխատանքային և ուսումնառության հետ կապված գործունեության իրականացմանը,
- Մշտապես դրսևորել պատշաճ վարքագիծ,
- Նպաստել փոխադարձ հարգանքի մթնոլորտի ձևավորմանը,
- Անհապաղ տեղեկացնել Համալսարանում տեղի ունեցած բուլինգի ցանկացած դեպքի մասին՝ անկախ այն անձամբ վերապրած կամ ականատես լինելու հանգամանքից,
- Պահպանել համապատասխան գաղտնիություն ցանկացած բողոքի կամ հետաքննության գործընթացի վերաբերյալ:

***Աղբյուրներ՝ Ֆլինդերսի համալսարան, Մոնտկլերի համալսարան, Վիքիպեդիա՝ «Բուլինգ» և «Ոտնձգություն» հոդվածներ:***

*Մարտ, 2020*